«ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔ» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲԱՆԱԽՈՍ

1999 07 27 Թիվ 29

1999 07 22

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

«ՍԻԼ» կոնցեռնի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր

Ներդրումային հոսքը Հայաստանում սկսել է մեծանալ 1995 թվականից: Վերջին տասը տարիների ընթացքում կատարված ուղիղ ներդրումների մոտ 75-80% բաժին է ընկնում 1995 թվականին հաջորդած տարիներին: Այստեղ նկատի չեն առնվում այն ներդրումները, վարկերը, որոնք ստացվել են պետական խողովակներով: Խոսքը մասնավոր ներդրումների մասին է, որոնք ուղղվել են բանկային համակարգ, արդյունաբերության, առևտրի, սպասարկման ոլորտներ: Ըստ մեր հաշվարկների, նշված ներդրումները տասը տարում կազմել են շուրջ 400 միլիոն դոլար: Մեծ մաս են կազմել Ռուսաստանի Դաշնությունից, Կանադայից, Իրանից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից կատարված ուղիղ ներդրումները:

«Մեծ մաս են կազմել Ռուսաստանի Դաշնությունից, Կանադայից, Իրանից, Ֆրանսիայից, Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից կատարված ուղիղ ներդրումները:»

Հարկ է նշել, որ ներդրումներ կատարելու առումով, Հայաստանի օրենքներն ամենաառաջադեմն ու ազատականն են ԱՊՀ երկրներում: Միգուցե Հայաստանում շատ օրենքներ չեն գործում, գուցե, բյուրոկրատական քաշքշուկների պատճառով որոշ օրենքներ մնում են անկատար, ինչն իր ազդեցությունն է ունենում ներդրումային ծրագրերի վրա: Այսուհանդերձ, օրենքները նպաստավոր են:

Բերեմ մի շարք օրենքներ, որոնք հարկ է բարելավել և որոնց առնչությամբ համապատասխան առաջարկների քննարկումներ են արդեն ծավալվում Ազգային ժողովի հանձնաժողովում: Մասնավորապես, շատ բացասական դրսևորում է, երբ եղած պայմաններում Հայաստան չեն ներկրվել բարձր տեխնոլոգիաներ, այդ ոլորտում ներդրումներ չեն կատարվել: Այս առնչությամբ պետք է ուսումնասիրություններ կատարվեն և օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ անելով փորձեն շտկել այդ բացը: Խոշոր ներդրում եղել է միայն հեռահաղորդակցության ոլորտում, բայց սա ևս յուրահատուկ է այնքանով, որ տվյալ պարագայում գործ ունեինք պատրաստի հա-

մակարգի հետ. պարզապես, տարիների ներդրումների միջոցով այն պետք է փոխվի ու հասցվի միջազգային չափանիշներին:

Կատարյալ չէ հաշվապահական հաշվառման համակարգը: Գործելով եղած շրջանակներում, կազմակերպությունները վստահ չեն, որ պետական ստուգիչ մարմինների հետ խնդիրներ չեն ունենա: Այս բնագավառում հարկ է պարզություն մտցնել, ինչը ևս պատրաստվում ենք բարձրացնել Ազգային ժողովում:

Մեզանում գործարարությունն ու գիտությունը միմյանցից տարանջատված են: Բարդություններ կան արտոնագրերի ձեռք բերման խնդրում, որոնք ևս ազդում են ներդրումային ծրագրերի վրա: Մեր կողմից առաջարկվել է, որպեսզի և՛ արտոնագրերի ձեռքբերումը, և՛ համապատասխան կազմակերպությունների գրանցումը տևեն մեկ օր, դրանք ունենան իրենց արժեքը և փաթեթի ձևով վաճառվեն որպես ապրանք: Այս պարագայում արտոնագիր ստանալ ցանկացողը կազատվի ամենատարբեր պետական ատյաններից ամենատարբեր տեղեկանքներ ձեռք բերելու մարաթոնից: Պետական մարմիններն իրենք կարող են հայթայթել այդ փաստաթղթերը և փաթեթով վաճառել՝ ներբազատելով գործարարներին ամենատարբեր քաշքշուկներից: Նախկինում գրանցման ժամկետը 30 օր էր: Մեր առաջարկություններից հետո այն կրճատվեց, և այսօր արդեն հինգ օրում ձեռնարկությունների գրանցումը կարողանում են ավարտել: Սակայն, ըստ մեզ, հինգ օրը ևս երկար ժամկետ է և տեղիք է տալիս բյուրոկրատական ձգձգումների:

Հայաստանում ներդրումային ծրագրերի մի մեծ հատված քանակական առումով բաժին է ընկել սննդի արդյունաբերությանը: Հնարավոր է, որ գումարային առումով այստեղ ներդրված միջոցներն այդքան մեծ չլինեն, բայց քանակական առումով հենց այս ոլորտում է մեծ թվով համատեղ ձեռնարկություններ ստեղծվել: Չնայած, մինչ օրս Հայաստանում գրանցվել է շուրջ 1400 համատեղ ձեռնարկություն, սակայն դրանցից 50% է միայն համապատասխան հարկային հաշվետվություններ ներկայացնում, մնացած կազմակերպությունները չեն գործում: Հիմնական ներդրումները կատարվել, տեխնոլոգիաներ են ներկրվել պահածոների, հանքային ջրերի, գարեջրի արտադրության ոլորտներում: Այս ճյուղերում անգամ ներքին շուկայում մրցակցություն կա:

Ժամանակին սննդի արդյունաբերության առումով հանրապետության պահանջարկի շուրջ 90%-ը ներկրվում էր: Ներդրումների, տեխնոլոգիաների ներկրման շնորհիվ համամասնությունը փոխվեց: Մասնավորապես, եթե տարիներ առաջ գարեջրի պահանջարկի 97%-ը բավարարվում էր արտասահմանյան արտադրանքով, ապա այսօր նույն՝ 97%-ով այն բավարարվում է տեղական արտադրությամբ: Նույնը՝ ջրերի, հյութերի արտադրության բնագավառում: Ասել է, թե ներդրումների շնորհիվ ներքին շուկայում զգալիորեն աշխուժացել է մրցակցությունը, այստեղից էլ՝ գործ ունենք որակյալ արտադրանքների հետ:

Եթե ներքին արտադրությամբ ապահովվում է ցորենի պահանջարկի 25%-ը, ապա շաքարի անհրաժեշտ խմբաքանակն ամբողջությամբ ներկրվում է, ինչը ես բացասական եմ համարում: Ըստ իս, սննդի բնագավառը ներդրումներով հագեցված է, և մրցակցության հաշվին ներքին շուկան բավարարելով, այստեղ մենք կարող ենք խոսել արդեն արտահանման մասին: Ներքին շուկայի պահանջարկի ծավալները շատ փոքր են և այն արտաքին լուրջ ներդրումներ դժվար թե ներգրավի: Ուստի պարտադիր է, որ Հայաստանում նոր տեխնոլոգիաներով արտադրվող ապրանքներն արտահանվեն՝ ապահովելով ավելի լուրջ ծավալներ, ներդրումներ:

«...ներդրումներ կատարելու առումով, Հայաստանի օրենքներն ամենաառաջադեմն ու ազատականն են ԱՊՀ երկրներում:»

Հայաստանի արդյունաբերությունն ունեցել է շատ խայտաբղետ պատկեր՝ ռադիոէլեկտրոնիկա, էլեկտրատեխնիկա, մեքենաշինություն, փայտամշակում, ադամանդագործություն, ոսկերչություն, քիմիական արդյունաբերություն և այլն: Այսօր շատ ցանկալի կլիներ, որ մթնոլորտը, օրենքներն այնպիսին լինեին, որ, ասենք, քիմիական եկամտաբեր արդյունաբերության մեր ունեցած պատրաստի կառույցներում համեմատաբար փոքր միջոցներ ուղղելով տեխնոլոգիայի որոշակի փոփոխությանը, շուկաների ձեռքբերմանը, կարողանայինք մեծածավալ արտադրանք թողարկել: Կարծում եմ, որ Հայաստանում էլեկտրոտեխնիկական, մեքենաշինության և ռադիէլեկտրոնիկայի բնագավառներում հիմ, բարոյապես մաշված տեխնոլոգիաներով հնարավոր չէ ներդրումներ ներգրավել: Պարզապես, այն հատվածներում, որտեղ հնարավոր է արտահանում կատարել, պետք է ծավալները մեծացվեն, ներդրումներ կատարվեն տեխնոլոգիաների, շրջանառու միջոցների բնագավառում: Օրինակ, մեքենաշինու-

Խաչատուր Սուքիասյանը ծնվել է 1961թ., Երևանում: 1978թ. ավարտել է Երևանի թիվ 5 միջնակարգ դպրոցը: 1985թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հաշվողական տեխնիկայի ֆակուլտետը: Դպրոցն ավարտելուց հետո, որպես բանվոր սկսել է աշխատել Աբովյանի «Սիրիուս» գործարանում: 1983թ.-ից «Սիրիուս» գործարանում եղել է կարգավորող ինժեներ, հետագայում՝ վարպետ, ավագ վարպետ, տեղամասի պետ: 1989թ.-ից դարձել է արտադրության պետ, որից հետո՝ կառուցվող գործարանի, ապա նաև՝ նույն գործարանի տնօրեն:

1992-94թթ. աշխատել է ՀՀ արդյունաբերության նախարարությունում՝ վարելով տարբեր ղեկավար պաշտոններ, այդ թվում՝ եղել է արտաքին տնտեսական կապերի գլխավոր վարչության պետ, նախարարի խորհրդական:

թյան մեջ վերցնենք կաղապարապատրաստումը: Այստեղ հնարավոր է ներդրումներ կատարելով զգալի արտահանումներ ապահովել: Մենք ունենք որակյալ մասնագետներ և նշածս միտումն այսօր արդեն իսկ նկատվում է: Ամսեկան մոտ 200000 դոլարի կաղապարներ են արտադրվում, որոնցից շուրջ 60% արտահանվում է:

Մոտ մեկուկես տարի է ներդրումներ են սկսվել թեթև արդյունաբերության բնագավառում: Այստեղ զուգահեռ ընթացավ. մի մասը նախատեսված էր տեղական սպառման, մյուսը՝ արտահանման համար:

Վատ տեղեկատվական աշխատանքի հետևանքով մենք միջազգային հանրությանը մինչ օրս չենք կարողացել ներկայացնել երկու շատ կարևոր փաստ: Այն, որ արժեթղթերի առք ու վաճառքը և դեպոզիտները Հայաստանում չեն հարկվում: Դեպի բանկային համակարգ ներդրումների հոսք կա, բայց դա շատ քիչ է: Կարծում եմ, եթե նշածս տեղեկատվությունը լավ տարածվի, կարելի է այդ ներդրումների ծավալները մեծացնել: Հայաստանում կայացած չէ արժեթղթերի երկրորդային շուկան: Այստեղ ներդրումներ չկան, համապատասխան միջոցներ չեն ուղղվում երկրորդային շուկայի կայացման համար:

Օրենքներում փոքր խնդիրներ կան, որոնք շտկելուց հետո վստահ կարելի է ասել, որ հայաստանյան ներդրումային օրենքները համապատասխան են միջազգային չափանիշներին: Կա մոտավորապես յոթ-ութ դրույթ, որը մեզ մոտ արձանագրված է, և կարծում եմ, մինչև 2000թ. առաջին կիսամյակը համապատասխան շտկումները կատարված կլինեն:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Հայտնի է Ձեր բարեգործական գործունեությունը: Ի՞նչ մշակութային ծրագրեր եք հովանավորել: Դրանց մեջ մտնու՞մ են թատրոններ, նվագախմբեր, եկեղեցիների բարեկարգում և այլն:

- Այս տարիների ընթացքում բոլոր բնագավառների հետ էլ առնչվել ենք, եղել են հազարավոր դիմումներ: Պարզ է, որ թվարկված ոլորտներում էլ հովանավորչություն կատարել ենք, որովհետև, իրոք, գործունեության դաշտը շատ մեծ է եղել:

- Համաձա՞յն եք այն տեսակետի հետ, թե արտաքին ներդրողները կերկյուղեն գալ Հայաստանի արտադրական ոլորտ այնքան ժամանակ, քանի դեռ այնտեղ բացակայում են ներքին ներդրումները:

-Համաձայն չեմ, որ ներքին ներդրումները բացակայում են: Կարելի է ասել, որ ներքին ներդրողներն ավելի վստահ են գործում, քան արտաքինները: Հենց թեկուզ մեր կոնցեռնի օրինակը կարելի է վերցնել, որը բավականին ներդրումներ է կատարել թե' դրսի գործընկերների հետ, թե' իր ունեցած միջոցների հաշվին:

- Վարկերի բարձր տոկոսադրույքները համարվում են Հայաստանում ներդրումների գլխավոր խոչընդոտներից մեկը: Արդյո՞ք Ձեր ղեկավարած «ՍԻԼ» կոնցեռնը վերցրել է վարկեր: Եթե այո, ի՞նչ դրույքաչափով և ո՞ր բանկերից:

- Հայաստանուսմ գործող բանկերից ոչ մի անգամ վարկ չենք վերցրել: Բարձր տոկոսադրույքից բացի կա նաև այլ խնդիր: Հարցն այն է, որ դրամական միջոցների համար Հայաստանում չկան արդյունավետ գործարար ծրագրեր: Եթե պատկերացնենք, թե այսօր կա մեկ միլիարդ դոլար, ո՞վ գիտե, թե այդ գումարն ինչ պետք է անել: Ռազմավարություն, ծրագրեր կա՞ն: Չկան: Այս տարիների ընթացքում մեկ միլիարդից ավելի գումար է մուտք գործել հանրապետություն, բայց արդյոք այն ապահովել է համապատասխան արտահանում կամ տնտեսության զարգացում: Այս բանը չի նկատվում:

Այսօր շատ վատ վիճակ է ստեղծվել բանկային համակարգում: Ներկայացված ոչ մի վարկային ծրագիր չի համապատասխանում իրականությանը, և բանկերի խորհուրդները չեն կարողանում գումարներ հատկացնել նման ծրագրերին:

- Հավանական համարու՞մ եք տեխնոլոգիաների արտահանում Հայաստանից, ո՞ր ոլորտներում:

- Մինչև այսօրվա կառավարության գալը, վերջին մեկուկես տարվա ընթացքում կատարվել է տեխնոլոգիաների արտահանում, մինչև անգամ՝ դրանց սպասարկող մասնագետներ են մեկնել արտասահման: Մոտ օրերս այդ քաղաքաքականությունը վերանայվեց, ինչը շատ կարևոր էր: Չէ՞ որ այդ նույն տեխնոլոգիան կարելի է տեղում շահագործել:

> *«... մինչ օրս Հայաստանում գրանցվել է շուրջ 1400 համատեղ ձեռնարկություն, սակայն դրանցից 50% է միայն համապատասխան հարկային հաշվետվություններ ներկայացնում, մնացած կազմակերպությունները չեն գործում:»*

Բերեմ օրինակ: Ըստ մեր հաշվարկների, ժամանակին Հայաստանում կար մոտ 5000-5500 տերմոպլաստ ավտոմատ և այս սարքավորումները հանրապետությունից արտահանվեցին: Այն տարիներին ՀՀ-ում մոտ 15 հազար տոննա հումք կար: Վերջինս, կարելի է ասել, արտահանվեց մի քանի կոպեկով: Դրանից մի քանի ամիս անց, երբ մենք որոշ արտադրություններ փորձեցինք հիմնել և սարքավորումները սկսեցին աշխատել, այդ նույն հումքը 10-15 անգամ ավելի բարձր գնով սկսեցինք գնել այն նույն երկրից, որը ժամանակին մեզանից արտահանել էր:

Այստեղ մենեջմենթի, իմացության խնդիր է: Երբեմն մեզ թվում է, թե ամեն ինչ գիտենք, բայց դրսում մարդիկ գործում են համակարգված, անում մասնագիտական կանխատեսումներ, գիտեն, որ այս ժամանակի կտրվածքով այսքան գնային աճ կարող է լինել և այլն: Նույնը կատարվում է տեխնոլոգիաների առնչությամբ:

- Ի՞նչ է արվում սփյուռքից Հայաստանում ներդրումներն աշխուժացնելու ուղղությամբ:

- Իմ կարծիքով, ոչինչ անել պետք չէ, որովհետև անելուց ակնկալված արդյունքի չենք հասնում: Պարզապես պետք է լավ ծրագրեր, ինչպես նաև՝ Հայաստանը ներկայացնել: Դրսին պետք է պարբերաբար ներկայացնենք, թե այստեղ շուկայական չափանիշների առումով ինչպիսի փոփոխություններ են կատարվում: Արտասահմանում մեծ է այն մտավախությունը, թե Հայաստանում գործում է ոչ թե շուկայական, այլ մեկ այլ մտածելակերպ: Եթե նրանց ի ցույց դրվեն շուկայական համակարգի կայացումը, «ՍԻԼ»-ի նման ձեռնարկությունները, որոնք երկար տարիներ աշխատում են, համապատասխան գործունեություն են ծավալում, թափանցիկ է այդ գործունեությունը, և որոնք օգուտներ ունեն, նրանց մոտ ևս ցանկություն կառաջանա Հայաստան գալու և գործելու: Պարզապես այդ մթնոլորտը պետք է նրանց ճիշտ ներկայացվի: Որևէ բան խնդրելու, բարեգործություն ակնկալելու կարիքը չկա, պետք է պարզապես շահավետ գործարար ծրագրեր ներկայացվեն:

«... Ներդրումների սակավությունը Հայաստանին բնորոշ երևույթ չէ, այլ տարածաշրջանային դրսևորում:»

- Դուք ներդրումների համար օրենսդրական դաշտը գնահատեցիք բավարար, միջազգային չափանիշներին համապատասխան: Ինչո՞վ եք պայմանավորում արտասահմանյան ներդրումների սակավությունը:

- Տասնյակ պատճառներ կարելի է նշել, մեկերկու պատճառով դա չի կարելի բնութագրել: Եղած խնդիրներից կարելի է նշել մեր հարևանների հետ ունեցած հարաբերությունները: Ասենք, եթե Թուրքիայի հետ ճանապարհը բացվեր, մեզ մոտ առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքներ 13-16% կեժանանային: Նշված չափով մենք լրացուցիչ ծախսում ենք ապրանքները Փոթիից Երևան փոխադրելու համար: Բացի այդ, մրցակցություն կառաջանար վրացական ու թուրքական ճանապարհների հետ կապված:

Կան մտածելակերպի, Հայաստանում գործող ինֆրակառուցվածքի, կառավարիչների խնդիրներ: Այս առումով փոփոխությունները շատ դանդաղ են գնում: Ակնառու է, որ այն մարդկանց մոտ, որոնք արտասահմանի հետ հաճախ են շփվում, ինչ-որ բան ստացվում է: Նկատենք նաև, որ ներդրումների սակավությունը Հայաստանին բնորոշ երևույթ չէ, այլ տարածաշրջանային դրսևորում:

- Ձեր ջանքերի շնորհիվ Հայաստանում առաջին մեծ ներդրողներից էր հանրահայտ «Քաստել Գրուպը»: Ինչով է բացատրվում վերջին շրջանում նրա ցուցաբերած պասսիվությունը, արդյոք Ձեր թվարկած խանգարիչ հանգամանքներով:

- Այո, և՝ թվարկված խանգարիչ հանգամանքներով, և՝, հնարավոր է, որպես հայկական մտածելակերպի արդյունք, հայկական մասով փայատերերի ոչ միջազգային չափանիշներով հարաբերվելու կամ մտածելու պատճառով: Ինչ վերաբերում է ՀՀ պետական մարմիններին, ապա դրանք «Քաստել» խմբի հետ շատ բարիդրացիական և հարգալից վերաբերմունք են ցուցաբերել՝ օրենքի շրջանակներում: Ըստ իս, այդ կարգի կազմակերպության հետ պետական ոչ մի մարմին կամ չինովնիկ խնդիրներ չի առաջացրել:

- Հայաստանի արդյունաբերական ճյուղերից հատկապես որո՞նք են համարվում առավել հեռանկարային՝ արտասահմանյան ներդրումների համար: Արդյո՞ք ներդրումային քաղաքականության միջոցով հնարավոր է վերականգնել նախկին մեքենաշինական, քիմիական ճյուղերը:

- Հնարավոր է, որ քիմիական արդյունաբերությունն աշխատի արտաքին, առաջին հերթին՝ ռուսական կամ ԱՊՀ երկրներից ստացված ներդրումների հաշվին և այդ երկրներում շուկա ունենալու արդյունքում: Որոշ քիմիական գործարաններ կան, որոնք կարող են նաև ասիական և այլ երկրներում շուկաներ ունենալ:

Մեքենաշինության բնագավառում մենք ունենք խնդիր էլեկտրոնային բլոկի հետ կապված: Չնայած, Հայաստանում մի քանի տարի է, ինչ գործում է «Մշակ» անունով մի կազմակերպություն, որը գնելով հայկական հաստոցներն ու որոշակի աշխատանք կատարելով, «Սիմենսից» բերված բլոկներ է տեղադրում և մի քանի անգամ բարձր արժեքով վաճառում այլ երկրներում: Այսուհանդերձ, մեքենաշինության բնագավառում չի կարելի ակնկալել այնպիսի մեծ հաջողություններ, ինչպիսին ունեցել ենք ժամանակին: Հնարավոր է արտահանում կազմակերպել գործիքաշինության բնագավառում:

- Այսօրվա հարկային համակարգը և վարչարարությունը գործարարի տեսանկյունից ի՞նչ թերություններ և առավելություններ ունեն:

- Քանիցս ասել եմ. Հայաստանում հայկական մտածելակերպի արդյունքն այնպիսին է, որ հնարավոր չէ այս հանրապետությունում նույն օրենքը բոլորի համար հավասար լինի: Ասենք, նպատակահարմար է կիրառություն տալ հաստատագրված հարկերի ինստիտուտին, այդ թվում՝ շահութահարկի առումով:

- Նոր կառավարությունը գործարար հույսեր ներշնչու՞մ է, թե՞ ոչ:

- Դատելով իմ ունեցած հանդիպումներից, կարող եմ ասել, որ նոր կառավարությունը հուսադրող է: Ավելին, կարծես, թե մեզ ավելի մեծ իրավունքներ պետք է տան, խրախուսեն օրինական բիզնեսը:

- Մտադիր չէ՞ք արդյոք զբաղվել նաև գիտական ճյուղերով: Ձեր վերաբերմունքն արտահանումների գործակալություն ստեղծելու գաղափարին:

- Գամ վերջից. արտահանումների գործակալություն, արտահանումների վարչություն կամ նախարարություն ստեղծելու առաջարկություն կառավարությանն արդեն արվել է: Կառավարությունում վերջերս խոսք է գնացել արտահանվելու ենթակա ապրանքների ցանկի վերաբերյալ: Իմ առաջարկը հետևյալն է. քանի որ արտահանման հետ կապված խնդիրներ էին առաջանում՝ մաքսային, հարկային և այլն, նպատակահարմար է, որ լինի արտահանման հետ կապված պետական կառույց, որը օրենքի սահմաններում պաշտպանի արտահանողներին, այստեղ կուտակվի անհրաժեշտ ողջ ինֆորմացիան: Ներկայումս, ինֆորմացիա միայն ունի վիճվարչությունը, որին ձեռնարկությունը ինֆորմացիա է տալիս ըստ իր հայեցողության, որևէ պարտավորվածություն չկա այստեղ: Իսկ առա-

ջարկվող կառույցում կուտակված ողջ ինֆորմացիան վերլուծելուց, խնդիրները բացահայտելուց հետո պարզ կլիներ, թե Հայաստանից ինչ ապրանք և ինչ ծավալի կարելի է արտահանել, կապահովեր աշխարհի հետ կապը: Կարծես թե նման կառույցի կայացման միտում կա:

Արդեն նշել եմ, որ գիտության և բիզնեսի միացումը, մերձեցումը Հայաստանում լավ չի կատարվում: Կարծում եմ, այսօր գիտական խմբերը պետք է ինչ-որ կազմակերպությունների հետ լինեն, որպեսզի դրանք հոգան խմբի կարիքները, իսկ վերջինս կազմակերպություններին տան այն գիտությունը, որի կարիքը զգում են կամ կարող են վաճառել: Հարցն այն է, որ եղած միջնորդ կազմակերպություններին «սպեկուլյանտ» էին անվանում, սակայն առանց միջնորդ կազակերպությունների ոչ մի արտադրական հզորություն չի կարող զարգանալ: Իրացման ինստիտուտը Հայաստանում ստեղծված չէ: Գիտնականների ստացած արդյունքները համապատասխան միջնորդ կառույցները պետք է ներկայացնեն շուկային: Գիտական շրջանակներն այսօր անպայման պետք է ինտեգրվեն բիզնեսի հետ, մեկը մյուսի մասը պետք է կազմի:

- Ունե՞ք, արդյոք, ներդրումներ Թուրքիայում և Ադրբեջանում:

- Թուրքիայում և Ադրբեջանում չունենք անմիջական ներդրումներ, սակայն, Վրաստանի, Արաբական էմիրությունների միջոցով աշխատում ենք, որտեղ ադրբեջանական կողմը նույնպես կա:

- Հայաստանում ո՞ր ճյուղերն են ավելի ընկալունակ ներդրումների համար:

- Եթե կազմակերպված լինի մուտքը այս կամ այն ճյուղ, բիզնես, Հայաստանում, բացի սննդի բնագավառից, մնացած բոլոր բնագավառներում շատ արագ կարելի է հաջողության հասնել, որովհետև մրցակցություն չկա: Սննդի ոլորտում մրցակցությունն արդեն առկա է: Եթե կանոնակարգված, կազմակերպված, միջազգային չափանիշները, կապերը, միջոցները, տեխնոլոգիաները և մենեջմենտը լավ ապահովվի, ապա ամեն տեղ էլ կարելի է հաջողության հասնել:

- Ինչո՞վ կբացատրեք Ձեր հաջողությունը:

- Դժվարանում եմ ասել: Մեծ դեր է խաղում հետևողականությունը, «Սիրիուսի» նման կանոնակարգված, բարձր պատասխանատվությամբ ձեռնարկությունում ունեցած աշխատանքային փորձս և այլն:

- Ինչու՞ եք գտնում, որ Հայաստանում չկա արժեթղթերի երկրորդային շուկա:

- Արժեթղթերի շուկան արդեն որպես բիզնես պետք է համարվեր: Այսօր այնտեղ ես բիզնես չեմ տեսնում: Ոչ թե գործարանների վերագործարկման մասին է խոսքը, այլ արժեթուղթ վաճառելու, արժեթղթի տիրոջը գտնելու, արժեթղթերը տարբեր մարդկանցից հավաքելու, մեկին վաճառելու. սա է արժեթղթերի երկրորդային շուկայի խնդիրը: Այս ամենը չկա Հայաստանում, ինչը խանգարում է: Եթե արժեթղթերի շուկան կայացած լիներ, շատ հնարավոր է, որ այսօր շատ կազմակերպություններ 50%-ից ավել մասով կլինեին արտասահմանացիների ձեռքում:

- Մի քանի խոսքով խնդրում ենք բնութագրել նախկին կառավարության գործունեությունը:

- Կարծում եմ, արդեն նախկին է և հարկ չկա բնութագրել: Նախկինում հանդիպումներ ունեցել և տարբեր առաջարկներ եմ արել: Կարող եմ ասել, որ ամենաբացասական վարչապետը, որ այս տարիների ընթացքում մենք ունեցել ենք, դա եղել է նախկինը՝ Արմեն Դարբինյանը:

- Խնդրում ենք բերել երեք փաստարկ, թե ինչու՞ արտասահմանցին պետք է ներդրում կատարի Հայաստանում և ոչ թե այլ մի երկրում:

- Եթե ԱՊՀ երկրների շրջանակներն է նկատի առնվում, ապա, հնարավոր է, որ օտարերկրացուն դուր գա որոշ օրենքներ, երկիրը կարող է հավանել, կամ էլ՝ բարեկամական կապերն աշխատեն: Այլ փաստարկ, անկեղծորեն ասած, չկա Հայաստան գալու համար:

- Հնարավո՞ր է Հայաստանում հարստանալ առանց օրենքները խախտելու:

- Հնարավոր է ոչ թե հարստանալ, այլ գործունեություն ծավալել: Խախտումներ դա չկոչենք, սակայն որոշակի ժամանակահատվածներում պետությունը, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, գծում է թույլատրելի մի սահման, որի շրջանակներում կարելի է գործել: Աչքի ընկած կազմակերպությունները հնարավոր չէ, որ օրենքի խախտումով աշխատեն, այդ դեպքում նրանք շատ արագ շարքից դուրս կգան: Ասենք՝ մեր կոնցեռնը գոյություն չէր ունենա, չէր դիմանա բազմաթիվ ճնշումներին, եթե բազմաճյուղ չլիներ:

- Նույնիսկ լավագույն օրենքների և պայմանների դեպքում, չեք կարծու՞մ, որ համատարած կաշառակերությունն արգելակում է Հայաստանի զարգացումը: Ինչու՞ օրենսդիր մարմինները չեն հարգում իրենց իսկ օրենքները:

- Ձեր հարցը որոշ առումով նաև պատասխանն է պարունակում: Իրոք, խնդիրը շատ լուրջ է: Արտասահմանին ինչ-որ տեղ վախեցնում է նաև Հայաստանում և ԱՊՀ երկրներում առկա կաշառակերությունը: Սա խրտնեցնում է օտարերկրյա ներդրողներին, որովհետև քաջ գիտակցելով կոռուպցիայի հետևանքները, թե դա ինչ վնասներ է տալիս իրենց տնտեսությանը, քաղաքականությանը, հասարակությանը, խուսափում են նման հարաբերությունների հետ գործ ունենալուց:

- Դուք չանդրադարձաք արդյունահանող արդյունաբերությանը: Ի՞նչ հեռանկարներ եք տեսնում այս ենթաճյուղում: «ՍԻԼ» կոնցեռնը այս բնագավառում ծրագրեր ունի՞:

- Այսօր ավելի շատ խոսվում է մետաղների և ոչ մետաղների մասին, որոնց պահանջարկը կա: Վերցնենք ասենք, պեռլիտները, բենտոնիտները, կվարցիտները, ցիլուլիտները և այլ նյութեր, որոնց արտահանման խնդիրը կա: Այստեղ մեծ ներդրումների դաշտ կա և հնարավոր է համապատասխան լուրջ ծրագրերի առկայության դեպքում ներդրումներ և արտահանում իրականացնել: Ոչ մետաղական նյութերի վերամշակման հարում իր խոսքն ունի ասելու նաև գիտությունը:.

Մետաղների հետ կապված մի քանի ծրագիր կա՝ կապված ոսկու, մոլիբդենի, պղնձի խտանյութի արդյունահանման հետ: Այս ուղղությամբ նախարարությունները աշխատում են, այստեղ խնդիրները մի փոքր ավելի բարդ են: Ըստ իս, այս խնդրով պետք է զբաղվեն այդ ոլորտով տասնյակ տարիներ զբաղված

մարդիկ, ովքեր մեծ փորձ, համապատասխան մասնագետներ ունեն և կարող են կազմակերպություններ ստեղծել ու այս ոլորտում իրականացնել լուրջ տնտեսական քաղաքականություն:

- Ձեր վերաբերմունքը լիզինգի մասին օրենքի վերաբերյալ: Դրա կիրարկումը կնպաստի՞ արդյոք Հայաստանում ներդրումների զարգացմանը:

- Առանց լիզինգի ես չեմ պատկերացնում մեր արդյունաբերության մեջ ունեցած տեխնոլոգիաների բացի լրացումը: Արդեն երկու տարի է մենք զբաղվում ենք լիզինգով: «Պոլիպլաստ» գործարանում բոլոր կաղապարները, որոնց գները տատանվում են 50-100 հազար դոլար, երեքից-չորս ամսով բերվում են Հայաստան, դետալներն արտադրվում են, որից հետո հետ ուղարկվում արտասահման: Պետք եղած դեպքում դրանք նորից բերվում են: Սա հենց լիզինգն է: Այս եղանակով կարելի է տեխնոլոգիաների պակասը լրացնել, կարելի է շատ արտադրություններ կազմակերպել: Հայաստանի նման շուկա ունեցող երկրներում լիզինգը իրեն շատ ավելի է արդարացնում, քան մեծ ծավալներում:

- Ձեր հաջողության պայմանները Ձեր անձնական որակնե՞րն են, թե՞ ընկերական կապերը:

- Շուկայական տնտեսության ժամանակ ի՞նչ ընկերական, բարեկամական կապերի մասին է խոսքը: Նայեք ձեր շուրջը, այսօր եղբայրը՝ եղբոր, հարևանը՝ հարևանի հետ է շուկայական հարաբերությունների մեջ:

- Հայաստանում կա՞ քաղաքակիրթ բիզնես:

- Միայն քաղաքակիրթ բիզնեսն է, որ երկարատև կարողանում է գործել, դրան չեն կարողանում վնասել, եթե անգամ ցանկանում են: Այս միտումն առկա է ողջ աշխարհում:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ

«Դասախոսությունների շարք» ծրագիր

Կալիֆորնիայի Բըրկլիի համալսարանի ժամանակակից հայագիտության փորձագետ

Սթեֆան Աստուրյանը

ներկայացնում է

«Ազգասիրության հայկական և ադրբեջանական դրսևորումները»

Հուլիսի 29-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում

Մուտքն ազատ է

ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք»
ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարան

Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens

Ծրագրի համակարգող՝

Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝